Հաստատում եմ
Հայաստանի պատմության թանգարանի
տնօրեն Գ. Վ. Գրիգորյան
05 .03. 2020 թ.

# ԿԱՐԾԻՔ

Արմինե Արարատի Գաբրիելյանի
«Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենը (տեխնիկատեխնոլոգիական բնութագիրը, գործառութային-ձևաբանական դասակարգումը, գեղարվեստական հարդարանքը)»
վերնագրով թեկնածուական ատենախոսության մասին

Հայաստանի պատմության թանգարանի հնագիտության և դրամագիտության բաժինների 2020 թ. մարտի 3-ի ընդլայնված նիստում քննարկվեց ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ Արմինե Արարատի Գաբրիելյանի « Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենը (տեխնիկատեխնոլոգիական բնութագիրը, գործառութային-ձևաբանական դասակարգումը, գեղարվեստական հարդարանքը)» վերնագրով ատենախոսական աշխատանքը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմամբ:

Նիստին մասնակցում էին թանգարանի փոխտնօրեն Ի. Մկրտչյանը, հնագիտության բաժնի վարիչ Լ. Խաչատրյանը, հնագիտության բաժնի գիտաշխատող, պ.գ.թ. Ա. Զոհրաբյանը, ֆոնդապահներ Լ. Մխիթարյանը, Ս. Հովսեփյանը, Ջ. Կարապետյանը, դրամագիտության բաժնի վարիչ պ.գ.թ. Ռ. Վարդանյանը, գիտաշխատող Հ. Հովհաննիսյանը:

Ելույթ ունեցան Ի. Մկրտչյանը, Լ. Խաչատրյանը, Ա. Զոհրաբյանը, Ռ. Վարդանյանը: Նիստի մասնակիցներն արձանագրում են հետևյալը.

Ատենախոսությունը նվիրված է Արցախի Տիգրանակերտի ուշ հելլենիստական և ուշ անտիկ շրջանի (մ.թ.ա. I – մ.թ. III դդ.) խեցեգործական մշակույթի ուսումնասիրությանը: Աշխատանքն իրականացվել է 2006-2017 թթ. քաղաքի հնագիտական

պեղումների ընթացքում հայտնաբերված շուրջ 40 հազար միավոր կազմող խեցեգործական նյութի ուսումնասիրությամբ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխանաբար՝ վեց, չորս և հինգ ենթագլուխներ պարունակող երեք գլուխներից, և եզրակացություններից: Այն ունի հապավումների, սկզբնաղբյուրների և գրականության, քարտեզների և աղյուսակների ցանկեր, 4 քարտեզ և 64 աղյուսակ:

Արցախի Տիգրանակերտում, տարիների ընթացքում հետևողականորեն և արդյունավետ կերպով իրականցվող հնագիտական պեղումներից հայտնաբերված, մի որոշակի ժամանակաշրջանի վերաբերող խեցեղենի ամբողջական, բազմակողմանի և խորացված ուսումնասիրություն կատարելու գաղափարն արդեն իսկ ողջունելի է: Առավել ուրախալի է այն, որ աշխատանքը կատարվել է բանիմացությամբ և գիտական բարեխղճությամբ:

Ներածության մեջ ատենախոսը հիմնավորում է թեմայի արդիականությունը, ձևակերպում է աշխատանքի նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, ներկայացնում հետազոտության մեթոդաբանությունը, աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլխում, որը նվիրված է Տիգրանակերտի անտիկ խեցեղենի պատրաստման տեխնոլոգիային և տեխնիկական հնարներին, մանրամասն նկարագրված է հումքի ընտրությունը և նախապատրաստումը, խեցանոթների պատրաստման, չորացման, մակերեսի մշակման և թրծման գործընթացները: Խեցու գույնի, կտրվածքի և մակերեսի մշակման հատկանիշներով, հեղինակն առանձնացրել է երեք տեխնիկական խումբ, տալով դրանցից յուրաքանչյուրի մանրամասն բնութագիրը և հայտնաբերված խեցեղենի ընդհանուր զանգվածում դրանց տոկոսային հարաբերակցությունը:

Երկրորդ, ամենաընդարձակ գլուխը, նվիրված է անտիկ խեցեղենի ժամանակագրական և գործառական-տիպաբանական դասակարգմանը: Հեղինակը նշում է, որ ուսումնասիրվող նյութի ժամանակագրական տարանջատման համար կողմնորոշիչ նշանակություն են ունեցել քաղաքի Անտիկ թաղամասում արձանագրված երեք մշակութային շերտերի տվյալները, որոնցից ստորին երկուսը վերաբերում են ուշ հելլենիստական (մ.թ.ա. I – մ.թ. I դդ.) և ուշ անտիկ (մ.թ. II-III դդ.) ժամանակա-

շրջաններին: Ձևակազմական և հարդարման հատկանիշներով՝ այս երկու շերտերում հայտնաբերված խեցեղենի առանձնացումն իրարից դժվարություն է ներկայացնում: Այս հանգամանքը հեղինակը հնարավոր է համարում բացատրել անտիկ ժամանակաշրջանում բնակչության կազմի փոփոխության բացակայությամբ: Այդուհանդերձ, հետազոտողը նկատել է, որ վաղ շրջանի խեցեղենի զանգվածում ավելի առատ են գունազարդ անոթները, իսկ ուշ շրջանի նյութերում՝ դեղնականաչավուն երանգներով անոթները:

Նախքան խեցեղենի գործառութային և ձևաբանական դասակարգումը ներկայացնելը, հեղինակը կատարել է տիպաբանական դասակարգման տեսական և մեթոդաբանական խնդիրների վերլուծություն և հիմնավորել դասակարգման համար իր կողմից ընդունված սկզբունքները, որոնց հիմքում ընկած է Գ. Նարիմանիշվիլիի մշակած սխեման: Կիրառական հատկանիշներից ելնելով, նյութը բաժանվել է կատեգորիաների, որոնք, ըստ ձևաբանական հատկանիշների, ստորաբաժանվել են տեսակների, տիպերի և տարբերակների: Ուսումնասիրված խեցեղենը աշխատանքում ներկայացվել է այդ ս խեմայով. յոթ կատեգորիաներ, որոնք ներառում են խեցեղեն իրերի երեսուներկու տեսակներ, որոնցից ոմանք ներկայանում են մի քանի տիպերով (քսանմեկ տիպ), որոնց մեջ հանդիպում են նաև տարբերակներ (վեց տարբերակ):

Այս գլխում առանձին քննարկվել են նաև դեռևս փոքրաթիվ, բայց Տիգրանակերտի տնտեսական ու մշակութային կապերի բացահայտման համար կարևոր՝ ներմուծված խեցեղենի նմուշները:

Նշելով, որ տիգրանակերտյան նյութերում վառ են արտահայտված հելլենիստական Արևելքի խեցեգործությանը բնորոշ ընդհանուր միտումները, ատենախոսին հաջողվել է, այնուամենայնիվ, հայտնաբերել սափորների, կաթսայատիպ անոթների, թասերի և գավաթների մի քանի տիպեր, որոնք այլ վայրերում չեն հանդիպում:

Երրորդ գլխում հեղինակը ներկայացրել է խեցեղենի գեղարվեստական հարդարանքի իրականացման եղանակները՝ գունազարդում, փորագրազարդում, դրոշմազարդում, ծեփում և վերադրում, փայլեցում: Ըստ գունազարդ անոթների վրա հանդիպող զարդամոտիվների բնույթի՝ դրանք խմբավորվել են որպես երկրաչափական, բուսական, ֆիգուրատիվ և այլ: Այդ խմբերում առանձնացվել են ենթախմբեր՝ ըստ պատկերների տեսակների և դրանց դասավորվածության: Զարդապատկերների

յուրաքանչյուր տեսակը համարակալվել և նկարագրվել է խումբ/ենթախումբ դասակարգմամբ, նշվել է, թե այն հատկապես ինչպիսի անոթների վրա է հանդիպում, հիշատակվել են այլ վայրերից հայտնի զուգահեռները, այն պատկերվել է գրաֆիկական և լուսանկարչական աղյուսակներում:

Ատենախոսությունն ավարտվում է ամփոփիչ եզրակացությամբ, որում, մասնավորապես, նշվում է, որ Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենը Հայաստանի ուշ հելլենիստական ժամանակաշրջանի խեցեղենի օրգանական մասն է կազմում: Միևնույն ժամանակ, Տիգրանակերտի, իսկ ավելի լայն առումով՝ Արցախի և Ուտիքի խեցեղենն ունի որոշակի տեղային առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են ինչպես որոշ անոթների ձևերում, այնպես էլ զարդապատկերման մեջ:

Արմինե Գաբրիելյանի ատենախոսությունն իր կուռ կառուցվածքով, հարուստ բովանդակությամբ, առանց ավելորդաբանությունների՝ գրագետ շարադրանքով, հասուն գիտական աշխատություն է: Արցախի Տիգրանակերտում մինչ այսօր պեղումներով հայտնաբերված անտիկ խեցեղենի համակողմանի ուսումնասիրման այս օրինակը կարևոր ներդրում է Հայաստանի անտիկ խեցեղենի ուսումնասիրման, մասնավորապես՝ դասակարգման, բնագավառում:

Ըստ արժանավույն գնահատելով ատենախոսի կատարած ծավալուն և արդյունավետ աշխատանքը՝ կցանկանայինք նրա ուշադրությունը հրավիրել մի քանի վրիպումների վրա:

1. Աղյուսակների ցանկում, խեցեղեն իրերի ձևակազմական գործընթացի վերաբերյալ 12.1-3 նկարների հեղինակի կամ աշխատության մասին հղումի անհրաժեշտություն կա:

2. Էջ 14-ում հեղինակը նշում է, որ «խեցու վերջնական գույնը պայմանավորված չէր կավի նախնական գույնով», սակայն անոթների խեցու նկարագրություններից մի քանիսում հանդիպում ենք «պատրաստված է բաց օքրայագույն կավից», «պատրաստված է բաց կարմրավարդագույն կավից» (էջ 55), «պատրաստված են կաղապարով, օխրայագույն և մոխրագույն կավից» (էջ 74), կամ «գորշավուն խեցուց պատրաստված» արտահայտությունների: Եթե դիտարկումները կատարվել են վիզուալ եղանակով, ինչպես նշում է հեղինակը, ապա ինչպե՞ս է որոշվել հումքի նախնական գույնը:

3. էջ 96-97-ում ասվում է, որ բեկորը «կարող էր պատկանել միականթ փարչանման անոթի», բայց աղ. 63, նկ. 1-ում անոթի վերակազմությունը պատկերված է երկու կանթով:

Նշված և մի քանի այլ փոքրիկ թերություններն ամենևին չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը:

Ատենախոսության սեղմագիրն արտահայտում է աշխատանքի հիմնական բովանդակությունը, որում տեղ գտած դրույթներն ու թեզերը հրատարակվել են վեց աշխատություններում:

Հայաստանի պատմության թանգարանի հնագիտության բաժինը գտնում է, որ Արմինե Արարատի Գաբրիելյանի «Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենը (տեխնիկատեխնոլոգիական բնութագիրը, գործառութային-ձևաբանական դասակարգումը, գեղարվեստական հարդարանքը)» վերնագրով ատենախոսական աշխատանքը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին: Այս աշխատությունը ցանկալի է տեսնել հրատարակված:

Հնագիտության բաժնի վարիչ՝ Լ. Ե. Խաչատրյան

Լ. Ե. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ

Հայաստանի պատմության թանգարանի

փոխտնօրեն՝ Ի. Ս. Մկրտչյան

05.03.2020 թ.